

## ՕՐԷՑՈՐ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1892 թ. Ապրիլ 25.

—«Ի՞նչ «Օրէցօրի» ժամանակ է, ասում էր ինձ «Մուրճ»-ի խմբագիրը Յոնաթան ամսին, Ջորջնեայց սուղը տիրում է չորս կողմ. երկու մեռելոց ունեցանք մէկի փոխարէն՝ իսկ դուք ուզում էք որ ես «Օրէցօր» տպեմ»։ Փետրուար ամսին ես նրանից լսեցի հետեւեալը.

«Մատ դարձալի էք դուք, պ. Եսեմեան. հրապարակի վրա կան լուրջ խնդիրներ, մեր խմբագիրները դրել են իրանց քւէտտիները, հասել է դրանց բոլէն—ու բի ու նոտ տու բի <sup>1)</sup> Թիֆլիսի թեմական պատգամաւոր՝ իսկ դուք ժամանակ էք գտնում Օրէցօր գրելու»։

Մարտ ամսին ես ինքս չը կամեցալ Օրէցօրս տպած տեսնել Նոյն Ձե-ի մէջ ուր հաղորդւում էր «Մուրճ»-ի աշխատակիցներից մինի—ալն է Սարգիս Սարգսեանցի մահը։

Ապօր եռամսեալ բազմաթերթ օրէցօրիցս քաղածք անելով ձեզ ներկայացնում եմ միալն ալն կտորները, որոնք դեռ չեն կորցրել իրանց թարմութիւնը։

Յոնաթան 3. «Ձը գիտեմ ինչ մարդասիրական զգացմունքից թելադրած Ս. Սինոդը արգելք է դնում առաջա խանգարած առողջութիւնս վերականգնելու, կարծես պատւիրելով ինձ անձնասպան լինելու, որ երբէք չանձն առնուլ չեմ կարող, համարելով ալն ընդդէմ ամենալն մարդկային և աստածալին օրինաց, որանք իւրաքանչիւր մարդու վրա պարտք են դնում խնայել կենաց իւրիս աստածալին պարգևի» <sup>2)</sup>։

Այս տողերը պատկանում են մեր հինաւորց Ami <sup>3)</sup> Պետրոսին։

Իրաւ է՝ «Արարատ»-ի ալն տետրակը մեզ հաւատացնում է որ փշեալ

<sup>1)</sup> To be or not to be—Համէտի խօսքերը—լի՛նել թէ չը լի՛նել։

<sup>2)</sup> «Արարատ»—1891 թ. դեկտեմբեր։

<sup>3)</sup> Ամի՛ ֆրանսերէն—ընկեր։

գրութիւնը Ս. Սինոդին ուղղելով—Պետրոս ամին «ինքնագլուխ» է հեռանում էջմիածնից առանց արձակուրդ ստանալու, բաց և աշնպէս մինք իմանում ենք շնորհիւ «Արարատ»-ի խմբագրութեան, թէ Պետրոս ամին «Երուսաղէմ ուխտ չէր գնացել (ինչպէս որ ալդ հաստատում էին շատ լեզուները), այլ Պօլիս էր գնացել հեթմարայիների հետ խորհրդակցելու իւր «խանդարած առողջութեան առաջն առնելու համար»...

Փետրւարի 5. Այսօր ես պատահեցի Խ. Մալումեանցին և մեր մէջ տեղի ունեցաւ հետեւեալ խօսակցութիւնը.

—Ասացէ՛ք, խնդրեմ, պ. Մալումեան, ինչով վերջացաւ ձեր դէմ եղած դատը:

—Դատարանը ինձ արդարացրեց:

—Ի՞նչպէս:

—Պր. Նախագահի հարցին թէ արդեօք ես աչքի առաջ ունէի պ. Սպանդարեանցին «Մշակ»-ի մէջ «Վարագողի ետեից»—իմ լօղածները գրելիս — ես պատասխանեցի—ոչ:

—Բայց միթէ ձեր «Վարագողի ետեից» լօղածում փշտատկած «Արշակաւանեաններ» խօսքը Սպանդարեանցի խմբին չէր վերաբերում և Զէյթունցիների օգտին փողեր հաւաքող և հաշիւ չը տուող ակնարկածը—չէ որ Սպանդարեանն է:

Այո—դէ ալդ ամենքը գիտեն. բայց թէ պ. Նախագահը ինձ հարցրեց թէ արդեօք ալդ լօղածները գրելիս ես աչքի առաջ ունէի Սպանդարեանցին թէ ոչ—և որովհետեւ պ. Սպանդարեանցը աչքիս առջև չէր իմ լօղածները գրելիս—չէ որ ես ամենամաքուր խղճով իրաւունք ունէի պատասխանելու՝ թէ «ես իմ լօղածները գրելիս պ. Սպանդարեանցին աչքիս առաջ չ'ունէի»:

—Բայց...

—Էլ ինչ բայց... ես արդարացաւ և էլ «բայց»-ի տեղ չը մնաց:

—Ղուաղ, պատասխանեցի ես:

Փետրւար 15. Վերջապէս աչսօր <sup>1)</sup> ալն է ապրիլ 2 ընտրութիւններից 13 օր անց—պ. Սպանդարեանցը 5 սիւնանոց ահագին առաջնորդողով փորձ է փորձում «կարճ կտրելով» ասպնդուցանել որ իւր՝ մի ձայնով ընտրուելը պէտք է «սիւնապն ընտրութիւն» համարել:

Յօդածը վերջանում է աշնպէս՝ «Հասկացողը՝ կը հասկանալ»:

Եթէ հասկացողներին հասկացնելու համար—հարկաւոր եղաւ 5 ահագին սիւնեակներ գրել—ապա քանի հարիւր սիւնեակներ պէտք է չարել՝ չը հասկացողներին հասկացնելու համար:

Մարտի 8. Սարը սարին չի դիպչիլ—մարդս մարդուն չի դիպչիլ, այս հին առածը էլի հաստատուեց:

<sup>1)</sup> «Նոր-Դար» № 27.

Բալց թէ աղ որքան ժամանակ կը տևի:

Մարտ 20, Դուք կարծում էք, ընթերցող, թէ եւրոպական լուսաւորած ազգերը գրականութիւն հանին, Սխալում էք:

Նոքա չունին գրականութիւն, որովհետեւ... որովհետեւ նրանց երգիծաբան գրողները ջնջել են իդէալական գրողներին, թատրոնականները ոչ թատրոնականներին, ոտանաւորով գրողները արձակ գրողներին և այսպէս իրար ջնջելով մէջ անդ գրականութիւն չեն թողել:

Եթէ վերջապէս ինձ չէք հաւատում, ընթերցող, ղիմեցէք մեր «Ձուր Քոսերի» հեղինակ Շիրվանզադէին, որը ձեզ կը կրկնի իւր պատուաւ ասածը Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովի նստին թէ՝ «Տառապիւնցի Տառտառէնը ջնջում է» «Օրլէանի կոպին» և «Օրլէանի կոպը» ջնջում է «Տառասկոնցի Տառտառէնին»:

Ապալիսով ընթերցող—եթէ դու կարդացել ես վերոյիշեալ երկու գրքովները և եթէ դրանցից մէկը քեզ ծիծաղեցրել է իսկ միւսը ողորել է—յը հաւատաս քո ստացած տպաւորութիւններին. դու ոչ կարող ես կարդալ աղ գրքովները և ոչ էլ որ և է բան զգալ, որովհետեւ նրանք իրար ջնջել են. իսկ եթէ իրաւ դու ուզում ես ազդած լինել մի գլուխ հումորիստիկական թերթեր կարդալ, թէ գիշեր թէ առաւօտ, թէ ձմեռ թէ ամառ և ստացած տպաւորութիւնդ չի ջնջուի:

Մարտ 22, Մեծադրեցէք որ դուք ներկայ էք մի ժողովի (դիցուք թատրոնականի) ուր խօսւում է ալն ամենի մասին թէ ի՞նչ միջոցներով ռաի կանգնեցնել և ոտքի վրա պահպանել մի գործ (դիցուք թատրոնը) և չանկարծ հանգիստականներից մէկը վեր կենալ ու ասի.

«Պարոններ—Դուք ո՞վ էք:

«Դուք ուզում էք այս գործին փող նւիրել՝ հարկաւոր չէ. մենք ունինք 700 ու.՝ մին, մենք ունինք 100 ուրբլի, որ հիմալ գտնուեցաւ երկու, պ. Փիթօսովը մեզ խոտտացել է 300 ուրբլի՝ այս երեք, դերասանները մեր օգտին ձրի մի ներկաւացում կը տան՝ այս չորս. և այս բոլորը մեզ հերիք է և դուք ձեր փողերով մեզ հարկաւոր չէք:

—Ի՞նչ ալանդակ մտքեր, կը բացականչի ընթերցողը:

Իսկութիւնը սա է որ աղպիսի մտքեր չալտնող կար—թաւարէ-դեան անուշով մէկը:

Մարտ 25, Թիֆլիսի փողոցները վիշցնում են Սահարալի աւազոտ անապատները: Մալրաքաղաքի աստղաբաշխները իդուր էին գուշակել Կովկասի համար մթնոլորդալին պեռտուրացիական. գիծ մարտը միշտ գիծ կը մնալ և պէտք է տեսնել թէ ինչպէս ալժմ նրա գիծ քամիները փոշու սարեր են բարձրանում—փոշու՝ որ խծկւում է մարդու բերանը, ականջը, քիթը, մազերը և ալն:

—Բալց միթէ ձեր փողոցները չեն ջրում, կը հարցնի ընթերցողը:

—Ոչ, ընթերցող, —ջուրը պահում են չուլիս, օգոստոս ամիսներէ համար:

Ապրիլ 1. Ես հանդիպեցաւ ալսօր Կենդրոնական գրաւաճառանոցում  
պ. Գր. Արծրունուն:

—Ասացէք խնդրեմ, պ. Արծրունի, ալդ խնայէս է որ դուք դնում  
էք ձեր քւէտուիքը և եթէ թեմական պատգամաւոր ընտրէք՝ Էջմիածին  
պիտի գնաք—մինչդեռ տարիներ շարունակ դուք ասում էիք թէ՝ «Ես Էջ-  
միածին դնացողներինցը չեմ»:

—«Բխմարկը իւր իշխանութեան գաղաթնակէտին եղած ժամանակ  
գերմանական ընկիստագում ասել էր իւր մասին՝ «Մենք Կանոսա գնա-  
ցողներինցը չենք»: Բայց երբ քիչ լետով հանդամանքները փոխւեցին, նա  
համակերպեց ալդ նոր դրութեան հետ և հաշտութիւն կապեց Հռոմի պապի  
հետ: Ես ինքս թէև շատ եմ քննադատել Բխմարկի ուղղութիւնը, բայց  
ալս խնդրում ես հետեւում եմ նրա օրինակին:

Ջարմանք բան՝ բաժանւելով Արծրունուց ես պատահեցի պ. Արգարին:

—Ինչպէս հաւանեցիք իմ կազմած կաթողիկոսական ցուցակը:

—Հիանալի է կազմած. վարպետը իսկոյն ճանաչւում է: Բազմաճա-  
շակի գոյն և համ ունի ձեր ցուցակը:

C'est ça, vous y êtes <sup>1)</sup> բացականչեց պ. Արգարը. ուրեմն դուք իմ  
կողմն էք, շարունակեց նա:

—Ոչ:

—Ի սէր Ատոռժոյ. ալս անգամ իմ կողմն եղէք, պաշտպանեցէք ինձ.  
երդում եմ ձեզ իմ «Փորձ»-ով, իմ «Արձագանք»-ով, իմ «Արմենիչէ Բիր-  
լիօտեկով» <sup>2)</sup>, որ ալս անգամ ամենավերջին անգամն է, որ ես պատգա-  
մաւոր եմ ուզում ընտրել—ալն էլ Արծրունու ջիգրու, որ սա իմ ամենա-  
վերջին ֆորտեւն է և ես ալսուհետեւ վերջ կը տամ իմ դաւանութեանական  
ձևերին à la чортъ подобен որ ես բանեցրել եմ սկսած ձախաւոր Զուբա-  
լովից մինչև բաղաձախ Սպանդարեանը:

Մի քանի քալ հագիւ էի արել, երբ դիմացս կանգնած տեսաւ Սպան-  
դար Սպանդարեանցին՝ նահանգական դատարանի մօտ:

—Ալդ ինչ դաշնակցութիւն էք կապել Արգարի հետ:

—Բաղաքական կամ, աւելի ճիշտ ասած, կաթողիկոսական:

—Բայց միթէ չէք իմացել Արգարի ասածը ձեր մասին և միթէ  
չը գիտէք որ նա ձեզ դէն կը չպուտի կաթ. ընտրութեան լաշորդ օրը:

—Նա զօռով ուզում էր պատգամաւոր ընտրել, իսկ ես մտածում  
էի... դրա համար բաւական է որ ես ընտրէի Արգարի փոխանորդ:

Ապրիլ 2. Խեղճ Սարգիս Սարգսեանց, 12—13 տարի սովորել զիմ-  
նադիպում և համալսարանում, ապա 13 տարի ուսուցչութիւն անել Ռու-

<sup>1)</sup> Այո, լաւ էք իմացել:

<sup>2)</sup> Armeniche Bibliotek.

սաստանի մի աննշան քաղաքում և միտնել մի շարժալ հիւանդութիւնից լետու։

Եւ նրան միշտ լարդում էի նրա անկեղծութեան և շխտական համար։

Հանդուցեալը մոլեռանդ վազան էր և նրա լօղածները «Մուրճ»-ի խմբագիրը տպում էր նրա ուղղագրութեամբ, բայց «ոչ ի խրախուս ալոց»։

Ս. Սարգսեանցի՝ իւր մասնագիտութեան սիրահար և մօլեռանդ վազան լինելը երևում է նաև հետեւեալից. շնորհաւորելով «Մուրճ»-ի նոր հրատարակչի ամսագրական ձեռնարկութիւնը, նա հարցրել էր՝ արդեօք ձեր կապած պալմանում խմբագրի հետ կա՞ն մի կէտ որ պահանջում լինի վ-ի և ոչ լ-ի գործածութիւնը։

Ապրիլ 20: Վերջապէս... վերջապէս Ս. Սինոպը վճռեց որ 1) 51 թիւը չի կազմում 103-ի երկու երրորդականը,

2) 46 թիւը 96 թւի կիսից աւելի չէ՝<sup>1)</sup>,

և այլ մի քանի նոյնքան պարզ խնդիրներ, որոնք սակաւն շատերի համար մոլթն էին, որովհետև դրանց մանրամասն բացատրութիւնները չէին գտնում տէրութեան օրէնքների մէջ։ Օրինակի համար ալն, որ ծխական պատգամաւոր ընտրւած են միայն նրանք, որոնք ընտրւած են և ոչ թէ նրանք, որոնք չեն ընտրւած...

Ապրիլ 22: Թեմական խորհրդաւոր ընտրութիւններին՝ խորհրդաւոր և օթ թիւը մեծախորհուրդ դեր է կատարել. օթը անգոյն հոգիներ սպիտակ քէշներ են տալ Արծրունուն (որի կաթողիկոսացունքն են Խրիմեան և Արիստակէս) և Արգարին (որի կաթ. ցուցակի մէջ չը կալ Արիստակէս, բայց կալ Աշդդեան)։

Ընտրութեան խորհրդաւորութիւնը բաղմակողմանի է, և թէ ի նկատի առնելու լինենք, որ այդ օրւալ ընտրութիւններին ներկալ էին մամուլի օթ ներկայացուցիչներ և Տաճկահալ պատգամաւորներից օթ հոգի հիւրեր։

Ապրիլ 25: Որ և է զաղափար կրնաք ինձի տալ ձեր թերթերու մասին, հարցրեց ինձ տաճկահալ պատգամաւորներից մէկը։

— Ամենաստուգ զաղափարը — պատասխանեցի եւ նրան, ցոյց տալով մեր քաղաքալին լտրորատորիալ կառալարիչ Ալիբեկեանի անալիզը։ Ասիկալ մեր շորհաստատ լապօռաթորալի դիրեկթեօն Տիար Ալիբեկեան էֆէնդիի արած վերլուծումն է, ալխատեցի եւ պարզաբանել ալն թուղթը, որ եւ ներկալացրի իմ տաճկահալ եղբօր և որի վրա գրւած էր.

Թիֆլիսի հալ թերթերի անալիզը

Իրողութիւնների ածխաթթւալին աղաւաղումն 50% /

Մկնդեղալին կեղծութիւն. . . . . 49% /

<sup>1)</sup> «Մուրճ» № 2, երես 330—331.

|                                        |      |
|----------------------------------------|------|
| Սուրբ և արդար գործին ծառայութիւն . . . | 0,01 |
| Ազնւութիւն . . . . .                   | 0,01 |
| Շիտակութիւն . . . . .                  | 0,01 |
| Զանազան խառնուրդներ . . . . .          | 0,07 |

— Իսկ և իսկ մերիններուն նման, բոլորդաց տաճկահաւեղբայրս, առանց վատ արանալու ինձ ուղղակի տսել: